ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

2022 –2023 թթ ուսումնական տարի
Վաղարշապատի հմ. 5 ավագ դպրոց
Մասնախմբի ղեկավար՝ Բաղդասարյան Ռ.Զ.
Տնօրեն՝ Գ.Ա. Սաֆարյան

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել պատմություն և հասարակագիտություն առարկաների դասավանդումը դպրոցում, կիրառելով դասավանդման ժամանակակից նորարարական մոտեցումներ:

- ✓ Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացմանը՝ ի հակադրություն պարզապես փաստային գիտելիքի մեխանիկական կուտակման և վերարտադրման; լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները:

- ✓ Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

- ✓ Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի և խմբային աշխատանքների կազմակերպմանը:

- ✓ Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

- ✓ Ուսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում (օրինակ, lib.armedu.am կայքում) տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվեվությունների և

բաց դասերի միջոցով:

- ✓ Առարկայական մասնագետների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

- ✓ Ապահովել ավագ դպրոցի մասնագիտական հոսքային դասարաններում պրոֆիլային առարկաների դասավանդման բարձր մակարդակը և սովորողների կողմից նշված առարկաների լիարժեք յուրացումը ըստ սահմանված ծրագրային պահանջների, ինչպես նաև սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը հումանիտար՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուների դասավանդման ընթացքում:

- ✓ Դպրոցի սովորողներին նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:
  Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը: